ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«23» փետրվար 2015թ. N 14

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի փետրվարի 18-ի N 36-Ա որոշումը, «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ա. Վասիլյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2015 թվականի փետրվարի «23»-ի

N 14 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Վ. Միքաելյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Ա. Պողոսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Վ. Կարապետյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Ընդունող՝

Հ. Հարությունյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ